# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 1

### ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ ավագանին*

Որոշեց

Հաստատել ավագանու19.01.2021 թ . հերթական նիստի օրակարգը.

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

2. 2020 թվականի բյուջեի տարեկան կատարողականի մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

3. 2021 թվականի ընթացքում համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

4. 2021 թվականի բյուջեի հաստատման մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

5. Համայնքապետարանի գույքի տարեկան գույքագրման ցանկի ամփոփման և հաստատման մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

**6. Միսավան համայնքում 14 սեփականատերերի հողի հարկի** վճարման արտոնություն տրամադրելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

7.Արարատի մարզի Միսավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 2

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ ավագանին*

Որոշեց՝

Հաստատել 2020 թվականի բյուջեի տարեկան կատարողականը՝ եկամտային և ծախսային մասերով ներկայացված ցուցանիշներով:

Եկամտային մասով՝ 53009,4 հազ. դրամ փաստացի կատարվել է 53513,4 հազ. դրամ 100,9 %:

Ծախսային մասով 53009,4 հազ. դրամ փաստացի կատարվել է 50047,6 հազ. դրամ 94.4 %:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 3-Ն

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ Սիսավան համայնքի ավագանին*

Որոշեց՝

1. Համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **7500 դրամ**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ**
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000 դրամ**
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **25000 դրամ**
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 դրամ**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ

2) համայնքի վարչական տարածքում գոյությունունեցողշենքերիևշինություններիվերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացմանևբարեկարգմանաշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500 դրամ.

4) Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույքաչափերը հաշվարկված են «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներում առկա 0.5 գործակիցի կիրառմամբ

5) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 200 000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 20000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 16100 դրամ

8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

*ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝*

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3400 դրամ
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4400դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6700 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8400 դրամ
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ

*բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝*

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3400 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4400 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 6700 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8400 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ.

9) ·իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 117 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 1700 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 8400 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 67000 դրամ.

դ. խաղատների համար՝ 167000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝84000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 34000 դրամ.

11) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

*ա. հիմնական շինությունների ներսում*

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1700 դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3400 դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8400 դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6700 դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10001 դրամ.

*բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝*

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 170 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 340 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 670 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1340 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2700 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5001 դրամ.

12) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 700 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1200 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-իչափով.

զ.եթեարտաքինգովազդտարածողգովազդակիրըտեղաբաշխելևտարածելէիրկազմակերպությանգովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլարտաքինգովազդտեղադրելութույլտվությանհամարսահմանվածտուրքի 10 %-ի չափով:

13) Սիսավան համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 33400 դրամ

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3400 դրամ

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 167000 դրամ:

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար`

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 834000 դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար` 1.667.000 դրամ:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար` 2.334.000 դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար` 3.334.000դրամ.

17) Սույն հոդվածի դրույքաչափերը բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերի, հաշվարկված են « Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներում առկա 0.3 գործակիցի կիրառմամբ

2. Համայնքի տարածքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը`

1) շենքիկամշինությանարտաքինտեսքըփոփոխողվերակառուցմանաշխատանքներկատարելուհետկապվածտեխնիկատնտեսականպայմաններմշակելուևհաստատելու համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 1000 դրամ.
2) ճարտարապետաշինարարականնախագծայինփաստաթղթերովնախատեսված`շինարարությանթույլտվությունպահանջող,բոլորշինարարականաշխատանքներնիրականացնելուցհետո` շենքերի և շինությունների (այդթվում` դրանցվերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումևուբարեկարգումը) կառուցմանավարտըավարտական ակտով փաստագրմանձևակերպման համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ.
3) ճարտարապետաշինարարականնախագծայինփաստաթղթերովնախատեսված աշխատանքներնավարտելուց հետո շահագործմանթույլտվության ձևակերպման համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ.
4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 2000 դրամ .
5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 2000 դրամ.
6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
7) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար` համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.
8) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար` համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.
9) համայնքայինսեփականությունհանդիսացողընդհանուրօգտագործմանփողոցներումև հրապարակներում (բացառությամբ` բակայինտարածքների, ուսումնական, կրթական,

մշակութայինևառողջապահականհաստատությունների,
պետականկառավարմանևտեղականինքնակառավարմանմարմիններիվարչականշենք
երիհարակիցտարածքների)
ավտոտրանսպորտայինմիջոցնավտոկայանատեղումկայանելուհամար՝
«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի
մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված
դրույքաչափերիսահմաններումհաստատվում էհամայնքիավագանուկողմից.
10) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ
փաստաթղթի համար մինչև 300 դրամ փոխհատուցման վճար.
11) Աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) կենցաղային աղբի համար՝ անձնագրային հաշվառման կանոններով ըստ
հասցեի
հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական
150 դրամ. բ) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 6000 դրամ:
գ) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման
այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր
մակերեսի համար՝ 50 -100 դրամ,**
դ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային շինությունների մասով՝
**մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5-ից 15 դրամ,**
ե) կրթական, մշակութային, և նմանատիպ այլ հասարակական շինությունների
մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3-15 դրամ:**
զ) առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ
հասարակական շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3-
15 դրամ:**
12) Սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի , գ, դ, զ կետերի դրույքաչափերը,
բացառությամբ «ե» կետի հաշվարկված են«Տեղական տուրքերի և վճարների
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի
դրույթներում առկա 0.5 գործակցի կիրառմամբ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՅԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 4-Ն

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, ավագանին*

Որոշեց՝

Հաստատել Սիսավան համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
19.01.2021 Թ. ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

2021թ.-ի վարչական և ֆոնդային բյուջեների հանրագումարը կազմում է 73625,0 հազ. դրամ

2021թ.-ի վարչական բյուջեն կազմում է ---------------------------------- 58488,6 հազ. դրամ

2021թ.-ի վարչական բյուջեի եկամտային մաս՝

**1. Գույքահարկ ------------------------------------------------------------- 6620,0 հազ. դրամ**

*որից՝*

*գույքահարկ շենք և շինություններից ---------------------------------- 120,0 հազ. դրամ*

*գույքահարկ փոխադրամիջոցներից ---------------------------------- 6500,0 հազ. դրամ*

**2. Հողի հարկ------------------------------------------------------------------- 8600,0 հազ. դրամ**

**3. Տեղական տուրք---------------------------------------------------- 2116.8 հազ. դրամ**

*որից՝*

*ծխախոտի վաճառքի թույլտվություն ---------------------------------- 58.4 հազ. դրամ*

*ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն ------------------------------ 58.4 հազ. դրամ*

*Աղբահանության վճար----------------------------------------------- 2.000.0 հազ.դրամ*

**4. Դոտացիա ------------------------------------------------------------- 40643.6 հազ. դրամ**

**5. Հողերի վարձակալություն------------------------------------------- 148,2 հազ. դրամ**

**6. Այլ եկամուտ գույքի վարձակալությունից ------------------------------ 360,0 հազ. դրամ**

2021թ.-ի վարչական բյուջեի մաս՝

1. Կառավարման ապարատ-----------------------------------------------19740.0 հազ. դրամ

որից՝

*աշխատավարձ--------------------------------------/4111/---------------- 16.700.0 հազ. դրամ*

*էներգետիկ ծառայություն----------------------------/4212/------------------- 550.0 հազ. դրամ*

*կապի ծառայություն-----------------------------------/4214/------------------ 150.0 հազ. դրամ*

*ապահովագրական ծախսեր--------------------------/4215/----------------- 80.0 հազ.դրամ*

*մեքենաների ընթացիկ նորոգում---------------------/4252/-------------------- 650.0 հազ. դրամ*

*գրասենյակային նյութեր------------------------------/4261/------------------- 200.0 հազ. դրամ*

*տրանսպորտային նյութեր-----------------------------/4264/------------------- 800.0 հազ. դրամ*

*հատուկ նպատակային այլ նյութեր---------------------/4269/---------------- 50.0 հազ. դրամ*

*տեղեկատվական ծառայություն--------------------/4234/---------------- -- 200.0 հազ. դրամ*

*Համակարգչային ծառայություններ----------------/4232/--------------------300.0 հազ. դրամ*

*Մասնագիտական ծառայություններ---------------/4241/---------------------60.0 հազ.դրամ*

2.Սոցիալական հատուկ արտոնություններ-------------------------------- 6000.0 հազ. դրամ

որից՝

*թաղման նպաստներ-----------------------------------/4726/------------------ 1000,0 հազ. դրամ*

*այլ նպաստներ-------------------------------------------/4729/-------------- 5000,0 հազ. դրամ*

3. Հասարակական կազմակերպություններ-------------------------------- 100,0 հազ. դրամ

որից՝

*նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմ. -/4819/------------------ 100,0 հազ. դրամ*

4.Փողոցների լուսավորություն---------------------------------------------- 2650,0 հազ. դրամ

որից՝

*էներգետիկ ծառայություն------------------------------------/4212/---------------1300,0 հազ. դրամ*

*ընթացիկ նորոգում և պահպանում---------------------/4251/-----------------1350,0 հազ. դրամ*

5.Ջրամատակարարում և կոյուղու համակարգ------------------------------ 1480,0 հազ. դրամ

որից՝

*կոմունալ ծառայություն-----------------------------/4213/---------------------- 500,0. հազ. դրամ*

*ընթացիկ նորոգում և պահպանում---------------------/4251/------------.----- 980,0 հազ. դրամ*

6.Հանգիստ մշակույթ ---------------------------------------------------2370.0 հազ. դրամ

որից՝

*հատուկ նպատակային այլ նյութեր---------------------/4269/----------------1370,0 հազ. դրամ*

*ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ----------/4239/-----------1000.0 հազ. դրամ*

7. Մշակույթի տներ և ակումբներ -------------------------------------------8970,0 հազ.դրամ

որից՝

աշխատավարձ -----------------------------------/4111/---------------------------6600,0 հազ.դրամ

*հատուկ նպատակային այլ նյութեր--------------------/4269/----------------  970,0 հազ. դրամ*

*ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ----------/4239/------------  950,0 հազ. դրամ*

*մասնագիտական ծառայություններ----------------------/4241/--------------  450,0 հազ. դրամ*

**8.Աղբահանություն----------------------------------------------------------------4367,0 հազ. դրամ**

որից՝

աշխատավարձ -----------------------------------/4111/--------------------------- 1077,0 հազ.դրամ

*բնակոմունալ ծառայություն------------------------------/4213/----------------- 2640,0 հազ. դրամ*

*տրանսպորտային նյութեր--------------------/4264/--------------- -----------  650,0 հազ. դրամ*

**9.Ճանապարհային տրանսպորտ---------------------------------------------- 1690,0 հազ. դրամ**

որից՝

*ընթացիկ նորոգում և պահպանում---------/4251/------------ ----------------  990,0 հազ. դրամ*

*տրանսպորտային նյութեր--------------------/4264/--------------------------  700,0 հազ. դրամ*

**10. Կանաչ տարածքների պահպանում**

Հատուկ նպատակային այլ նյութեր ………………/4269/……………………200,0 հազ.դրամ

**2021 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասը կազմում է ------------ 15136,4 հազ. դրամ**

որից՝

*Շենքերի և շինությունների շինարարություն-----/5112/-------------------13835,3* հազ. դրամ

Այլ մեքենաներ և սարքավորումներ-------------*/5129/-------------------1301,1* հազ. դրամ

**Համայնքի ղեկավար** **Ս. Թարթիկյան**

Կազմված է 19.01.2021թ.
Բաղկացած է երեք թերթից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 5

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին*

Որոշեց՝

Հաստատել Սիսավանի Համայնքապետարանի 2020թ. գույքագրման ցանկը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*
*ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*19.01.2021Թ. ԹԻՎ 5ՈՐՈՇՄԱՆ*

Միսավանի համայնքապետարանի 2021 թ. գույքագրման ցանկ

| h/h | Գույքի անվանումը | Չափի միավորը | փաստացի առկա | փաստացի |
|---|---|---|---|---|
| 1 | բազմոց | կտոր | 3 | 3 |
| 2 | Գրասենյակի պտտվող աթոռներ | հատ | 2 | 1 |
| 3 | Գրասեղան | հատ | 5 | 5 |
| 4 | Համակարգչի սեղան | հատ | 1 | 1 |
| 5 | Ժուռնալի սեղան | հատ | 2 | 2 |
| 6 | Գրապահարան մեծ | հատ | 2 | 2 |
| 7 | Պահարան երկաթյա | հատ | 3 | 3 |
| 8 | Նիստերի սեղան | հատ | 1 | 1 |
| 9 | Աթոռներ | հատ | 16 | 16 |
| 10 | Կախիչ | հատ | 5 | 4 |
| 11 | Սառնարան/ Super general/ | հատ | 1 | 1 |
| 12 | Համակարգիչ | հատ | 1 | 1 |
| | նույն թվում՝ | | | |
| 13 | մոնիտոր | հատ | 5 | 5 |
| 14 | Պրինտեր HP 1020 | հատ | 1 | 1 |
| 15 | Պրինտեր Samsung ML 2160 | հատ | 1 | 1 |
| 16 | Պրինտեր սկաներ MF 4010 | հատ | 1 | 1 |
| 17 | Մկնիկ Genius | հատ | 1 | 1 |
| 18 | Ստեղնաշար Genius | հատ | 1 | 1 |
| 19 | Սնուցող սարք | հատ | 4 | 4 |
| 20 | Ջեռուցման կաթսա /Baxi 1,240 fi / | հատ | 1 | 1 |
| 21 | Ավտոմեքենա ԳԱԶ -3102 | հատ | 1 | 1 |
| 22 | Ավտոմեքենա ՎԱԶ-21213 | հատ | 1 | 1 |
| 23 | Հեռուստացույցի տակդիր | հատ | 1 | 1 |
| 24 | փոշեկուլ | հատ | 1 | 1 |
| 25 | Նոթբուք sony vaio core i5 | հատ | 1 | 1 |
| 26 | Համակարգիչ intel core i5 | հատ | 1 | 1 |
| 27 | Համակարգիչ intel core i3 | հատ | 2 | 2 |
| 28 | Վարագույր կախիչով | հատ | 4 | 4 |
| 29 | Բորսի տանձիկներ | հատ | 3 | 3 |
| 30 | Օդորակիչ zanussi | հատ | 2 | 2 |

ԳՐԱԴԱՐԱՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Կատալոգի արկղեր | հատ | 3 | 3 |
| 2 | Էտաժերկա | հատ | 6 | 6 |
| 3 | Ստելաժ մետաղյա | հատ | 24 | 24 |
| 4 | Գրականություն | հատ | 5120 | 5120 |

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Կուլտուրայի տուն | հատ | 1 | 1 |

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 6-Ն

## ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԻ 14 ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10- րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին*

Որոշեց՝

1. Հաստատել հողի հարկի վճարման արտոնության տրամադրման առաջարկությունը՝ համաձայն Հավելվածի:

2. Առաջարկել աշխատակազմին իրականացնելու հողատեսքի փոփոխության գործառույթները անշարժ գույքի կադաստրում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
19.01.2021 Թ. ԹԻՎ 6-Ն ՈՐՈՇՄԱՆ

| h/h | Հողամասի ծածկագիրը | Հողամասի սեփականատերը | | | Սեփակա-նատիրոջ Հողամասի մակերեսը ընդամենը /հեկտար/ | Հողատեսքը փոփոխվող հողամասի մակերեսը / հեկտար / | Հողամասի նախկին հողատեսքը | Արտոնության տրամադրման ժամկետը /տարի/ | Հողամասի նոր /առկա/ հողատեսքը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | | | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | 104-072 | Վարդանյան | Հովսեփ | Հովհաննեսի | 0,18 | 0,18 | վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 2 | 104-014 | Ցանիկյան | Արմեն | Գրիգորի | 0,69 | 0,69 | վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 3 | 119-010 | Հարությունյան | Հակոբ | Սամվելի | 0,683 | 0,683 | վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 4 | 104-065 | Հարությունյան | Մուշեղ | Հարությունի | 0,429 | 0,429 | վարելահող | 4 տարի | Խաղողի այգի |
| 5 | 119-004 | Մարտիրոսյան | Գագիկ | Կարապետի | 0,81 | 0,81 | վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 6 | 119-013 | Մարտիրոսյան | Արմեն | Գագիկի | 0,77 | 0,77 | վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 7 | 119-002 | Ավետիսյան | Արամ | Վարազդատի | 0,584 | 0,584 | Վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 8 | 104-004 | Հակոբյան | Գարիկ | Սարիբեկի | 0,747 | 0,747 | Վարելահող | 4 տարի | Թթենու այգի |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 119-009 | Հարությունյան | Նարեկ | Սամվելի | 0, 337 | 0, 337 | Վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 10 | 105-046 | Մանուկյան | Տիգրան | Մանվելի | 0,835 | 0,835 | Վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 11 | 119-023 | Մկրտչյան | Խաչիկ | Մարտիրոսի | 0,817 | 0,817 | Վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 12 | 115-013 | Ավետիսյան | Հրանտ | Միսակի | 0,653 | 0,653 | Վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 13 | 119-024 | Մկրտչյան | Միմոն | Մարտիրոսի | 0,817 | 0,817 | Վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |
| 14 | 126-012 | Սայադյան | Կարո | Լյուդվիկի | 0,387 | 0,387 | վարելահող | 4 տարի | Դեղձենու այգի |

Համայնքի ղեկավար՝ Ս.Թարթիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 7

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 –րդ կետի դրույթներով՝*

Որոշեց

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սիսավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 16-ի թիվ 6 որոշումն ուժը կորցրած ճանաչել:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Սիսավան
համայնքի ավագանու 2021 թվականի
հունվարի 19-ի թիվ 7 որոշման

*Սիսավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը*

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 15 (15 հաստիք)
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 280 000 |

**Հայեցողական պաշտոններ**

| | | |
|---|---|---|
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 166 000 |

Համայնքային ծառայության պաշտոններ

| | | |
|---|---|---|
| համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1 / | 1 | 180 000 |
| համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1 / | 1 | 170 000 |
| համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2 / | 1 | 170 000 |
| համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1 / | 1 | 168 000 |
| համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1 / | 1 | 100 000 |

## Քաղաքացիական աշխատողներ

| | | |
|---|---|---|
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 136 000 |
| Գրադարանավար | 1 | 89 700 |
| Այգեպան | 1 | 165500 |
| Մարզիչ | 1 | 89 700 |
| Վճարների հավաքագրող | 1 | 89 750 |
| Ուսանողական ավտոբուսի վարորդ | 1 | 91 000 |

## Տեխսպասարկման անձնակազմ

| | | |
|---|---|---|
| Պահակ | 1 | 100 000 |
| Հավաքարար | 1 | 158 000 |

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

Աշխ. Քարտուղարի ժ/պ Հ. Հարությունյան